Հավելված
ՀՀ կառավարության 2018 թ.
փետրվարի 22-ի նիստի N 7
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

1. Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) նպատակը Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին մատչելի գնով դիզելային վառելիքի ձեռքբերման, հողերի արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացման միջոցով գյուղացիական տնտեսությունների եկամուտների բարձրացմանը նպաստելն է:

2. Ծրագրի ավարտման ժամկետը սահմանել 2018 թվականի հուլիսի 1-ը:

3. Մատակարարները դիզելային վառելիքի վաճառքը իրականացնում են համապատասխան մարզերի համայնքներում:

4. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն)՝

1) պայմանագրային հիմունքներով, որպես սուբսիդիա, մատակարարին տրամադրում է մինչև 360,000,000 դրամ (1 լիտրի սուբսիդիան՝ մինչև 60 դրամ)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգին համապատասխան մինչև 6000000 լիտր դիզելային վառելիքի համար՝ համաձայն N 1 աղյուսակի,

2) Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից լրացված և հաստատված N 1 ձևը, որպես հայտ էլեկտրոնային փոստով տրամադրում է մատակարարին,

3) էլեկտրոնային փոստով մարզպետարաններից ստանում է տեղեկատվություն մարզերում՝ ըստ հողօգտագործողների իրացված դիզելային վառելիքի քանակության մասին,

4) էլեկտրոնային փոստով մատակարարից տեղեկատվություն է ստանում՝ ըստ մարզերի, կազմակերպությունների՝ հավաքագրած գումարների և իրացված դիզելային վառելիքի քանակության մասին՝ համաձայն N 1 աղյուսակի,

5) ծրագրի իրականացման ընթացքի մասին՝ ըստ անհրաժեշտության, տեղեկատվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ,

6) հաշվի առնելով ստացված հայտերը, ըստ անհրաժեշտության փոփոխություններ է կատարում N 1 աղյուսակում,

7) ծրագրի ավարտից և մատակարարների կողմից հաշվետվությունները ստանալուց հետո մինչև 2018 թվականի սեպտեմբերի 1-ն ամփոփ հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

5. Նախատեսված մինչև 6000000 լիտր դիզելային վառելիքի վաճառքն իրականացվում է՝ համաձայն N 1 աղյուսակի, հետևյալ չափանիշներով՝

1) հողօգտագործողներին՝ Հայաստանի Հանրապետության մարզպետարանների հսկողությամբ, ելնելով հողօգտագործողի կողմից մշակվող հողատարածքի չափից՝ մինչև 3 հեկտար հողատարածքի համար, 1 հեկտարին՝ մինչև 200 լիտր չափաբաժնով,

2) Հայաստանի Հանրապետության մարզպետարանների հսկողությամբ՝ գյուղատնտեսական կոոպերատիվներին, գյուղատնտեսական արտադրանք արտադրելու նպատակով համատեղ գործունեության պայմանագիր կնքած անձանց և 2018 թվականի Հայաստանի Հանրապետությունում հացահատիկային և հատիկաընդեղեն որոշ մշակաբույսերի տեղեկան սերմնաբուծության ու սերմնարտադրության զարգացման ծրագրի շրջանակներում սերմացուներ ձեռք բերած շահառուներին՝ ըստ փաստացի մշակվող հողատարածքի չափի՝ 1 հեկտարի համար մինչև 200 լիտր չափաբաժնով,

3) Նախարարության ենթակայությամբ գործող կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի գիտական կենտրոնների համար ելնելով փաստացի մշակվող հողատարածքի չափից՝ վերջիններիս կողմից ներկայացված պահանջարկի հիման վրա:

6. Հայաստանի Հանրապետության մարզպետները՝

1) հիմք ընդունելով համայնքներում 2017 թվականին փաստացի մշակված հողատարածքները և 2018 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար սույն ծրագրի N 1 աղյուսակով սահմանված մարզին հատկացվող դիզելային վառելիքի քանակությունները, համապատասխան համայնքի ղեկավարի կողմից պահանջվող դիզելային վառելիքի քանակության համար վճարումը հավաստող վճարման անդորրագրի պատճենը և վճարում կատարած հողօգտագործողների ցուցակը՝ N 2 ձևը, N1 ձևի հետ միասին ներկայացնում են Նախարարություն,

2) համայնքների ղեկավարների միջոցով ապահովում են դիզելային վառելիք գնել ցանկացող սույն ծրագրի 5-րդ կետով սահմանված անձանցից նախարարության կողմից իրականացված մրցույթի արդյունքում ձևավորված գնով գումարների հավաքագրումը,

3) իրականացնում են սույն ծրագրի 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով իրենց վերապահված աշխատանքները,

4) համայնքների ղեկավարների միջոցով ապահովում են ծրագրի շրջանակներում համայնքներում դիզելային վառելիք գնած հողօգտագործողների ցուցակների հավաքագրումը՝ համաձայն N 2 ձևի, պահպանությունը և դրանց տրամադրումը Նախարարությանը՝ տեղեկատվությանը տիրապետելու, ուսումնասիրություն և հսկողություն իրականացնելու համար,

5) ապահովում են ծրագրի ավարտից հետո 15-օրյա ժամկետում ծրագրի շրջանակներում մարզի համայնքների համար նախատեսված, փաստացի վաճառված դիզելային վառելիքի և շահառուների քանակության մասին տեղեկատվության հավաքագրումը և հաստատումը՝ համաձայն N 3 ձևի, մեկ օրինակ տրամադրելով Նախարարությանը,

6) ապահովում են հավաքագրված գումարների փոխանցումը մատակարարի բանկային հաշվեհամարին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետի և մատակարարի միջև կնքված պայմանագրի,

7) համայնքների ղեկավարների միջոցով ապահովում են դիզելային վառելիքի տրամադրումը վճարում կատարած հողօգտագործողներին:

7. Ապահովում է համայնքների ղեկավարների միջոցով հողօգտագործողներից դիզելային վառելիքի դիմաց վճարման ենթակա գումարների հավաքագրումը՝ ըստ համայնքի և հավաքագրված գումարների փոխանցումը մատակարարի բանկային հաշվեհամարին, նշելով համայնքի անվանումը և հողօգտագործողի տվյալները՝ համաձայն N 2 ձևի:

8. Մատակարարը պարտավոր է՝

1) ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետություն ներկրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգին համապատասխան մինչև 6000000 լիտր դիզելային վառելիք՝ համաձայն N 1 աղյուսակի,

2) ծրագրի շրջանակներում դիզելային վառելիքը մատակարարել համապատասխան մարզերի համայնքներ հաշվիչ սարքավորումներով կահավորված տարաներով,

3) նախարարություն ներկայացնել հանրապետություն ներկրված դիզելային վառելիքի յուրաքանչյուր խմբաքանակի լաբորատոր փորձաքննության եզրակացությունը,

4) դիզելային վառելիքի վաճառքն իրականացնել համայնքների ղեկավարների միջոցով՝ համաձայն մարզպետների կողմից լրացված և հաստատված N 1 ձևի ու դիզելային վառելիքի համար վճարում կատարած հողօգտագործողների ցուցակների՝ համաձայն N 2 ձևի,

5) ստուգել և անճշտություններ չհայտնաբերելու դեպքում հաստատել Հայաստանի Հանրապետության մարզպետարանների կողմից հաստատված N 3 ձևը և պատճենը ներկայացնել Նախարարություն՝ որպես ծրագրի կատարման մասին հաշվետվություն,

6) ներկայացված N 3 ձևում անճշտություններ հայտնաբերելու դեպքում տեղեկացնել համապատասխան մարզպետարանին՝ ճշտումներ կատարելու համար,

7) Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներից փաստացի հավաքագրված գումարների դիմաց դիզելային վառելիքը մատակարարել համապատասխան համայնքին՝ համայնքի ղեկավարի հետ կազմելով դիզելային վառելիքի հանձնման-ընդունման երկկողմանի հաստատված ակտ՝ համաձայն N 4 ձևի,

8) Հայաստանի Հանրապետության մարզերում դիզելային վառելիքի վաճառքն ավարտելուց հետո՝ մեկամսյա ժամկետում Նախարարություն ներկայացնել՝

ա. ծրագրի կատարման մասին հաշվետվություն,

բ. ֆինանսական հաշվետվություն:

9. Իրենց լիազորությունների շրջանակներում ծրագրի իրականացման ընթացքի նկատմամբ Նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչությունը իրականացնում է վերահսկողություն, համապատասխան մարզպետարանները՝ հսկողություն, իսկ Նախարարության աշխատակազմի գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչությունը՝ մոնիթորինգ:

10. Նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության ու գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչությունները իրենց կողմից կատարված՝ համապատասխանաբար հսկողության և մոնիթորինգի արդյունքների մասին պարբերաբար տեղեկատվություն են ներկայացնում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին:

Աղյուսակ N1

Բ Ա Շ Խ Ա Ց ՈՒ Ց Ա Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ

NN ը/կ	Անվանացանկ	Դիզելային վառելիքի նախատեսված քանակը (լիտր)
1	Արագածոտն	450,000
2.	Արարատ	320000
3.	Արմավիր	550,000
4.	Գեղարքունիք	1,000,000
5.	Լոռի	750,000
6.	Կոտայք	290,000
7.	Շիրակ	1,120,000
8.	Սյունիք	750,000
9.	Վայոց ձոր	187,000
10.	Տավուշ	400,000
11.	«Գյումրիի սելեկցիոն կայան» փակ բաժնետիրակ ընկերություն	25,000
12.	«Երկրագործության գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	10,000

13.	«Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	2,000
14.	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի «Բալահովտի ուսումնափորձարարական տնտեսություն»	25,000
15.	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի «Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն մասնաճյուղի Արմավիրի փորձամելիորատիվ կայան»	15,000
16.	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Հյաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադարմի «Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն մասնաճյուղի Նալբանդյանի փորձակայան»	6,000
17	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության (պահուստ)	100,000
Ընդամենը		**6,000,000**

Ձև N 1

Հաստատում եմ

ՀՀ _____ մարզպետ

_____

_____

____ _____ 20 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՄԱՐԶԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ

N N ը/կ	Համայնքը	Հատկացված դիզելային վառելիքի քանակը (լիտր)	Հատկացված դիզելային վառելիքի դիմաց հավաքագրման ենթակա գումարը (դրամ)
	Ընդամենը		

Գյուղատնտեսության և

բնապահպանության վարչության պետ

_____

(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Ձև N 2

Ց Ա Ն Կ

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ _____ ՄԱՐԶԻ _____ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ

N ը/կ	Հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը	Հողօգտագործողի անձնագրի տվյալները	Մշակվող հողատարածքի չափը (հա)	Դիզելային վառելիքի քանակու-թյունը (լիտր)	Դիզելային վառելիքի դիմաց վճարված գումարը (դրամ)	Վճարման ամիսը, ամսաթիվը	Հողօգտա-գործողի ստորա-գրությունը	Հողօգտա-գործողի հողի հեռախոսա-համարը	Հողօգտա-գործողի հողի վարձակալության կամ օգտագործման վկայականի համարը

Համայնքի ղեկավարի ստորագրությունը _____

(Կ.Տ.) (ստորագրությունը)

Ձև N 3

Հաստատում եմ

մարզպետ

_____

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ

ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ _____ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ, ՓԱՍՏԱՑԻ ՎԱՃԱՌՎԱԾ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

N ը/կ	Համայնքը	Համայնքի ղեկավարի ազգանունը, անունը	Համայնքին նախատեսված քանակությունը (լիտր)	Համայնքում փաստացի վաճառված քանակությունը (լիտր)	Դիզելային վառելիքի գնած շահառուների թիվը	Համայնքի ղեկավարի ստորագրությունը
Ընդամենը						

_____

Մատակարար կազմակերպության անվանումը

(Կ.Տ.) (ստորագրությունը)

Ձև N 4

Ա Կ Տ

ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Հայաստանի Հանրապետության _____ մարզի _____ համայնքի ղեկավար _____ -ը, մի կողմից, և _____ ընկերության տնօրեն _____-ը, մյուս կողմից, սույն ակտով հաստատում ենք, որ պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման ծրագրի շրջանակներում, համայնքի համար մարզպետի կողմից հաստատված չափաքանակին համապատասխան, _____ ընկերության հաշվեհամարին փոխանցված _____ դրամի դիմաց մատակարարը 20____ թվականի _____-ին համայնքին է հանձնել _____ լիտր դիզելային վառելիք:

ՀԱՆՁՆԵՑ	ԸՆԴՈՒՆԵՑ
_____-ի տնօրեն	_____համայնքի ղեկավար
_____	_____
_____	_____
Կ.Տ.	Կ.Տ.